NATIONAL UNIVERSITY
OF ARCHITECTURE
AND CONSTRUCTION OF
ARMENIA

Babol Noshirvani
University of Technology

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ **կրթության և գիտության ոլորտներում** Թվական՝ Ապրիլ 2021 **Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (Հայաստանի Հանրապետություն)** **և** **Բաբոլ Նոշիրվանի տեխնոլոգիական համալսարանի (Իրանի Իսլամական Հանրապետություն)** **միջև**	**تفاهم نامه همکاری مشترک** **در زمینه های علمی و آموزشی** تاریخ: April 2021 **دانشگاه ملی معماری و عمران ارمنستان (جمهوری ارمنستان)** **و** **دانشگاه صنعتی نوشیروانی بابل (جمهوری اسلامی ایران)**
«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» Հիմնադրամը «ՃՇՀԱՀ», ի դեմս՝ ռեկտոր, պրոֆեսոր Եղիազար Վարդանյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից, և «Բաբոլ Նոշիրվանի տեխնոլոգիական համալսարան», ի դեմս Նախագահ՝ Ջավադ Վասեղի Ամիրիի, որը գործում է կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, հետագայում՝ Կողմեր, համաձայնվում են հետևյալի մասին:	با توجه به سابقه طولانی ارتباط اجتماعی و فرهنگی بین دو کشور ایران و ارمنستان و لزوم عمق بخشی در زمینه های علمی، پژوهشی و آموزشی بنیاد "دانشگاه ملی معماری و عمران ارمنستان" به نمایندگی رئیس دانشگاه جناب آقای پروفسور یقیازار وارطانیان از یک طرف و " دانشگاه صنعتی نوشیروانی بابل" به نمایندگی رئیس دانشگاه جناب آقای دکتر جواد واثقی امیری از طرف دیگر، که طبق اساسنامه موسسات نام برده عمل می نمایند (من بعد طرفین)، تفاهم نامه ذیل را بدین مضمون منعقد نمودند:
Հոդված 1. Նպատակը 1.1. Հիմնվելով Կողմերի փոխհամաձայնության վրա՝ համագործակցությունը կիրականացվի հետևյալ ոլորտներում՝ Համատեղ կադրերի պատրաստում (բակալավր, մագիստրոս, ասպիրանտ) և վերապատրաստում (շարունակական կրթություն): • ասպիրանտների ղեկավարում, գիտական թեզերի պաշտպանության կազմակերպում, • միջազգային գիտակրթական ծրագրերի, գիտաժողովների, սեմինարների, համաժողովների, ցուցահանդեսների, ստուգատես-մրցույթների համատեղ կազմակերպում, անցկացում, մասնակցություն, • ուսումնագիտական ծրագրերի և տեղեկատվության փոխանակում, տեղեկագրերի հրատարակում, • էլեկտրոնային գրադարանային ֆոնդի	**ماده ۱ - زمینه های همکاری** ۱/۱ - بر اساس توافق متقابل طرفین، همکاریها در زمینه های ذیل تحقق خواهند یافت: • آموزش و پرورش کادرهای مشترک (در مقاطع کارشناسی، کارشناسی ارشد، دکترا) ، باز آموزی و تحصیلات تکمیلی (آموزش مستمر) • راهنمایی و اجرای پایان نامه های دکترا، سازمان دهی دفاعیات رساله های علمی، • سازمان دهی، برگزاری و شرکت در برنامه های بین المللی علمی-آموزشی، جلسات علمی، سمینارها، هفته های طراحی دانشجویی در سطح بین المللی ، همایش ها، نمایشگاهها، سازمان دهی مشترک مسابقات و سنجش ها. • تبادل اطلاعات و برنامه های آموزشی، انتشار خبرنامه ها. • تأمین دسترسی به و کتابخانه های الکترونیکی. • - اجرای مشترک پروژه های طراحی، تجربی و

հասանելիության ապահովում, • նախագծային, փորձարարական, փորձագիտական աշխատանքներ, • երկու համալսարանների հետ համագործակցող կազմակերպությունների (ընկերությունների) միջոցով՝ մրցույթներին (տենդերներին) հնարավոր մասնակցություն:	کارشناسی • امکان شرکت در مناقصه ها با همکاری شرکت های تخصصی همکار طرف قرارداد با دانشگاه ها.
Հոդված 2. Համագործակցության ոլորտները 2.1.Կողմերը մտադիր են համագործակցել իրենց իրավասությունների շրջանակներում հետևյալ ոլորտներում՝ • Հիդրոտեխնիկական կառույցների և հիդրավլիկ ճարտարագիտություն • Գրունտերի և հիմքերի ճարտարագիտություն • Ճանապարհների և տրանսպորտային ճարտարագիտություն • Սեյսմակայուն ճարտարագիտություն • Կառուցվածքների ճարտարագիտություն • Շրջակա միջավայրի ճարտարագիտություն • Գեոդեզիա • Շինարարական նյութեր, տեխնոլոգիաներ	**ماده ۲** ۲.۱ - بر اساس توافق متقابل طرفین، همکاریها در زمینه های ذیل تحقق خواهند یافت: ○ مهندسی آب و سازه‌هاي هیدرولیکي ○ مهندسی خاک و پی ○ مهندسی راه و ترابری ○ مهندسی زلزله ○ مهندسی سازه ○ مهندسی محیط زیست ○ مهندسی نقشه‌برداری (مهندسی فتوگرامتری) ○ تکنولوژی و مصالح ساختمان
3. Համագործակցության Հուշագրի գործողության ժամկետները, երկարաձգման, փոփոխության և դադարեցման կարգը 3.1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ներկայացուցիչների ստորագրման պահից, գործում է հինգ տարի ժամկետով և Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Հուշագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել ևս հինգ տարով: Կողմերից մեկի ցանկությամբ Հուշագրի դադարեցման դեպքում Կողմերը գրավոր ձևով միմյանց տեղեկացնում են դրա գործողությունը դադարեցնելու իրենց մտադրության մասին ոչ ուշ, քան համապատասխան ժամկետի լրանալուց 6 ամիս առաջ: 3.2. Սույն Հուշագրի շրջանակում համագործակցությունը համակարգելու և արդյունավետ գործընթաց կազմակերպելու նպատակով՝ Կողմերը նշանակում են համագործակցության պատասխանատու անձ (անձանց), ինչի մասին տեղեկացնում են միմյանց գրավոր եղանակով: 3.3. Սույն Հուշագրի շրջանակներում իրականացվող ցանկացած նախաձեռնություն կարող է կանոնակարգվել կողմերի միջև առանձին պայմանագրի կնքմամբ: 3.4. Սույն Հուշագրի շրջանակում իրականացվող համագործակցությունը կարգավորվում է	**ماده ۳ - مهلت اعتبار تفاهم نامه همکاری، نحوه تمدید، تغییر و خاتمه تفاهم نامه** ۱.۳- این تفاهم نامه از زمان امضای نمایندگان دو طرف لازم الاجرا است، برای مدت پنج سال اعتبار دارد و بنا به توافق متقابل طرفین مدت اعتبار تفاهم نامه برای پنج سال بعدی قابل تمدید است. در صورت درخواست هر کدام از طرفین جهت فسخ تفاهم نامه، می بایست حداقل شش ماه قبل کتباً طرف مقابل را از تصمیم خویش مطلع سازد. ۲.۳- جهت هماهنگی امور این تفاهم نامه و سازماندهی موثر، طرفین شخص (اشخاص) مسئول همکاری را منصوب می کنند که ارتباط فی ما بین به صورت کتبی انجام خواهد شد. ۳.۳- هرگونه همکاری در چارچوب این تفاهم نامه می تواند با عقد قراردادی مجزا بین طرفین تنظیم و مقرر گردد. ۴.۳- انجام هر گونه همکاری در چارچوب این تفاهم نامه بر مبنای قوانین اجرایی جمهوری ارمنستان و جمهوری اسلامی ایران تنظیم می گردد. ۵.۳ - اصلاحات و فسخ این تفاهم نامه تاثیری بر به پایان رساندن برنامه ها و طرح های جاری در چارچوب این تفاهم نامه نخواهند داشت و برنامه ها بر اساس توافق به دست آمده ادامه خواهند یافت. ۶.۳- این تفاهم نامه از دو نسخه برابر از لحاظ حقوقی به زبانهای ارمنی و فارسی تنظیم شده و یک نسخه در اختیار

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության օրենսդրություններով: 3.5.Սույն Հուշագրի փոփոխությունները կամ գործողության դադարեցումը չեն ազդի դրանով սկսված ծրագրերի և նախագծերի իրականացման վրա, որոնք կշարունակվեն համաձայնեցված պայմաններով: 3.6. Սույն Հուշագիրը կազմված է հայերեն և պարսկերեն երկու իրավահավասար օրինակից՝ որոնցից մեկական օրինակ տրվում է Կողմերին:	طرفین قرار می گیرد.
4. Կողմերի իրավաբանական հասցեներն ու ստորագրությունները «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» Հիմնադրամ «ՃՇՀԱՀ» 0009, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տերյան 105 Հեռ.՝ +374 10 54-74-25 info@nuaca.am https:www.//nuaca.am/ Ռեկտոր Պրոֆեսոր Եղիազար Վարդանյան Ստորագրությունը 15.04.2021	**ماده ۴، آدرس حقوقی و امضای طرفین** **بنیاد دانشگاه ملی معماری و عمران ارمنستان** کد پستی ۰۰۰۹؛ جمهوری ارمنستان،ایروان؛ خیابان تریان، پلاک ۱۰۵ تلفن: ۳۷۴۱۰۵۴۷۴۲۵+ info@nuaca.am https:www.//nuaca.am/ رئیس دانشگاه **پروفسور یغیازار وارطانیان** امضا
Բաբոլ Նոշիրվանի տեխնոլոգիական համալսարան 47148 - 71167, Իրանի Իսլամական Հանրապետություն Շարիաթի փող., Բաբոլ, Մազանդարան Հեռ., ֆաքս՝ +98(11) 32332071-4 en.nit.ac.ir international@nit.ac.ir Նախագահ Պրոֆեսոր Ջավադ Վասեղի Ամիրի Ստորագրությունը 15.04.2021	**دانشگاه صنعتی نوشیروانی بابل** ایران ، مازندران، بابل، خیابان شریعتی کد پستی ۴۷۱۴۸۷۱۱۱۶۷ تلفن۹۸۱۱۳۲۳۳۲۰۷۱۴+ en.nit.ac.ir international@nit.ac.ir رئیس دانشگاه **پروفسور جواد واثقی امیری** امضا

Chancellor of Babol Noshirvani University of Technology

رئیس دانشگاه صنعتی نوشیروانی بابل